



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
ԽԱՎԱԿՈՑՈՒԱԳԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ



«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖՈՐՉՆ ՌԻԶՈՐՄԻՄ» ՍՊԸ, ՀՐԱԶԴԱՆԻ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքի վերաբերյալ

1.1 «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ն ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի երկաթի հանքավայրի համար 20.10.2012թ-ից ունեցել է ՇԱԹՎ 29/169 ընդերքօգտագործման իրավունք: Ընկերությունն օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ մինչ 2020 թվականի վերջը չի իրականացրել: 2020 թվականի մարտի 4-ի թիվ Ն/26.1972-2020 գրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին նախարարության ընդերքի վարչության պետի կողմից ներկայացվել է «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված խախտումների հիմքով իրավունքի դադարեցման վերաբերյալ միջնորդագիր: Միջնորդագիրը հիմք ընդունելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թ. հուլիսի 5-ի N 863-Ա հրամանով 2020 թվականի հուլիսի 20-ին նշանակվել են լսումներ: Հրամանի վերաբերյալ ծանուցվել է Ընկերության տնօրենը: Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 31.07.2020թ. N 1033-Ա հրամանով /հրամանը բացակայում է նախարարության կայքում/: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքի¹ տվյալների՝ 2021թ. հունվարի 14-ի դրությամբ նախարարի 31.07.2020թ. N 1033-Ա հրամանը բողոքարկվել է Ընկերության կողմից:

«Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ն ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի երկաթի հանքավայրի ըդերքօգտագործման ՇԱԹՎ 29/169 թույլտվությունը ստացել է 20.10.2012թ., շահագործման թույլտվության ժամկետը՝ մինչև 26.01.2032թ.: ՊՎ 169 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքել է 20.11.2012թ.: 12.12.2015թ-ին կատարվել է հանքավայրի կոորդինատների փոփոխություն:



Նկար1. Հրազդան քաղաքը և Հրազդանի երկաթի հանքի սարը

¹ <http://www.mtad.am/hy/mtad27.12/>

Հրազդանի երկաթի հանքավայրի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական դրական ԲՓ-118 եզրակացությունը տրվել է 2008թ-ի հոկտեմբերի 13-ին այդ ժամանակահատվածում հանքի շահագործման թույլտվությունն ունեցող «Նագին» ՍՊԸ-ին: Այս ընկերությունը հանքը պետք է շահագործեր 2009թ-ին, սակայն 2011թ-ին առանց հանքը շահագործելու հանքի ակտիվները «Նագինը» վաճառեց չինական «Ֆորչուն Օյլ» ընկերությանը, որի ներկայացուցիչը Հայաստանում «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ն է:

Հատկացված հանքավայրի մակերեսը՝ 38,7 հա է, հաստատված պաշարը՝ հանքաքար՝ 70 000,0 հազ.տ, երկաթի պարունակությունը՝ 26.46%: Արդյունահանման թույլատրելի տարեկան ծավալը 1-10 տարիների համար՝ տարեկան 2000.0 հազ.տ, 11-20 տարիների համար՝ տարեկան 3000.0 հազ.տ, 21-25 տարիների համար՝ տարեկան 4000.0 հազ.տ:

1.2 Ազդակիր՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքային համայնքի մասին

Բնակչության թիվը 2019 թվականի փետրվար ամսվա դրությամբ՝ 58212 մարդ, որից տղամարդիկ՝ 28617, կանայք՝ 29595, նպաստառու՝ 2206, թոշակառու՝ 3802 հոգի: Համայնքի վարչական տարածքը՝ 15273 հա: Հրազդան քաղաքի տարածքը 2057հա է, գյուղատնտեսական հողատեսքերի մակերեսը կազմում է 11 042 հա, որից՝ սեփականաշնորհված՝ 4 132 հա, պահուստային՝ 6 904 հա: Քաղաքի տարածքով հոսում է Հրազդան գետը, որի մեջ թափվում են Մարմարիկ և Աղվերան գետակները: Հրազդանում են գտնվում Հրազդանի ցեմենտի գործարանը, Հրազդանի ջերմաէլեկտրակայանը, «Սևան-Հրազդան» հիդրոհամալիրի Հրազդանի հիդրոէլեկտրակայանը: Քաղաքի կենտրոնում է գտնվում «Սևան-Հրազդան» հիդրոհամալիրի և ամբողջ համակարգի ջրամբարը: Հրազդան քաղաքն ունի 1 դրամատիկական թատրոն, 1 պատկերասրահ, 2 թանգարան, 8 գրադարան, 1 մասնավոր ԲՈՒՀ, 2 ուսումնարան, 2 քոլեջ, 13 հանրակրթական, 1 ավագ և 1 հատուկ դպրոց, 12 մուր-մանկապարտեզ, 2 սպորտային, 2 երաժշտական, 2 մանկական արվեստի դպրոց, քաղաքապետարանի մանկապատանեկան ստեղծագործական, մշակույթի և երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոններ, ձմեռային մարզաձևերի, մանկապատանեկան մարզադպրոցներ: Տարբեր գործատուների մոտ և տնային տնտեսություններում զբաղվածների ընդհանուր թիվը կազմում է 17223 մարդ: Առողջական խնդիրների առկայության դեպքում բնակիչներն օգտվում են կա՛մ մարզային, կա՛մ Երևան քաղաքի բժշկական հաստատությունների ծառայություններից:

Քաղաքի խնդիրներից են՝ գործազրկության բարձր մակարդակը, սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսը, ցածր աշխատավարձը, քաղաքային կոյուղագծերի և ռոռգման ջրամատակարարման համակարգի անմխիթար վիճակը, աշխատատեղերի պակասը, աշխատանքային միգրանտների առկայությունը, վարչական բյուջեի՝ հարկեր, տեղական տուրքեր, գույքի վարձակալություն, մուտքերի սղություն, մթնոլորտային օդի աղտոտվածությունը արտադրական ձեռնարկությունների արտանետումների արդյունքում:

1.3 «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ- ի իրական սեփականատերերի մասին

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը 2021 թվականի փետրվարի դրությամբ «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ն սահմանված կարգով իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր չի ներկայացրել:

1.4 13.10.2008թ. ԲՓ-118 եզրակացության փորձաքննական պահանջները

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ՀՀ կառավարության որոշումը՝ հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ (լցակույտային տնտեսության տարածքներ և այլն):
2. Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել.
 - տարածքի (հանքավայրի, արտադրական հրապարակի և այլն) ռեկուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերը:
3. Գործունեության ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգ, կազմել հետևախազդային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

Հանքի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական 13.10.2008թ. ԲՓ-118 դրական եզրակացությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, վաղուց կորցրել է իր իրավական ուժը, քանի որ մինչ այժմ ընկերությունը գործունեություն չի իրականացրել:

2. «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորություններն՝ ըստ 20.11.2012թ. ՊՎ 169 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

20.11.2012թ. ՊՎ 169 ընդերքօգտագործման պայմանագրում թվային առումով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին մասնակցության կոնկրետ պարտավորություններ չեն նշված, բացի համայնքի սոցիալական ծրագրերին մասնակցության ընդհանուր դրույթներից:

2.1.1 Համայնքների նկատմամբ ստանձնած պարտավորությունների փաստացի կատարողականը

Քանի որ պայմանագրով ոչինչ նախատեսված չի եղել, ընդերքօգտագործողի կողմից 2016-2018թթ. համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ չեն կատարվել:

2.2 Բնապահպանական պարտավորություններ

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:
4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:
5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

ԷկոԼուրի՝ 2020թ. սեպտեմբեր ամսին տարածք այցելության ընթացքում տեղում կատարված ուսումնասիրությունների, համայնքի ղեկավարի տեղակալի և բնակիչների շրջանում անցկացրած հարցազրույցի ընթացքում, ինչպես նաև ԱՃԹՆ շրջանակներում Ընկերության և պետական մարմինների կողմից ներկայացված հաշվետվությունների վերլուծությունից պարզեց հետևյալը՝

- Մինչ ուսումնասիրությունների օրը չէր սկսվել հողերի գործառնական նշանակության փոփոխության գործընթացը:
- Չի հաշվարկել և չի վճարել բնապահպանական և բնօգտագործման վճարներ/հարկեր, մետաղական հանքավայրի օգտագործման համար սահմանված պետական տուրքը:

2.3 Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

Պայմանագրում բացակայում են հանքի փակման միջոցառումները և դրանց կատարման համար ֆինանսական երաշխիքները:

3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Ֆորչն Ռիսորսիս» ՍՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալներն ըստ կայքի ²

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
Երկաթի խտանյութ	0	0	0
Շահութահարկ, դրամ	0	0	0

²<https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/>

Եկամտային հարկ, դրամ	Հաշվարկված՝ 5617878 Վճարված՝ 5617878	Հաշվարկված՝ 5617878 Վճարված՝ 5617878՝	Հաշվարկված, 4006476 Վճարված՝ 4006476
Ավելացված արժեքի հարկ, դրամ	Հաշվարկված 420000 Վճարված՝ 420000	Հաշվարկված 420000 Վճարված՝ 420000	Հաշվարկված 420000 Վճարված՝ 420000
Ակցիզային հարկ, դրամ	0	0	0
Ռոյալթի, դրամ	0	0	0
Բնօգտագործման վճար, դրամ	0	0	0
Բնապահպանական վճարներ, դրամ	0	0	0
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	0	0	0
ՇԹ Պետտուրք, դրամ	Հաշվարկված՝ 50000 Վճարված՝ 50000	Հաշվարկված՝ 50000 Վճարված՝ 50000	Հաշվարկված՝ 50000 Վճարված՝ 50000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	Բազային 27829000, Հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 1 028460 Վճարված՝ 1028460	Բազային 27829000, Հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 10284 60 Վճարված՝ 1028460	Բազային 27829000, Հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 1028 460 Վճարված՝ 1028460
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	0	0	0
Գույքահարկ (Հրազդան քաղաք, դրամ	0	0	0
Գույքահարկ (Երևան քաղաք, դրամ	Տվյալներ չկան	Տվյալներ չկան	Տվյալներ չկան
Հողի հարկ (Հրազդան քաղաք), դրամ	0	0	0
Վարձակալու թյուն	0	0	0

(Հողամաս), դրամ			
Վարձակալություն (Անշարժ գույք)	0	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	0	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն (Հրազդան քաղաք)	0	0	0
Բարեգործական հատկացումներ (Հրազդան քաղաք)	0	0	0
Ոչ ֆինանսական օգնություն	0	0	0
Տուգանք, դրամ	0	0	0
Աշխատատեղեր, մարդ	1	1	1
Անհատույց օտարումներ	0	0	0

4. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017 և 2018թ-ի համար

- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարության (ՏԿԵՆ) 2016թ. ԱՃԹՆ հաշվետվության³ մեջ նշված է, որ այդ թվականին Ընկերությունը Երևան քաղաքում վճարել է 17300,0 դրամ գույքահարկ, մինչդեռ նույն թվականի Ընկերության հաշվետվության մեջ այդ թիվն արտացոլված չէ: Նույնը վերաբերվում է նաև 2017թ. հաշվետվություններին: Ըստ նախարարության 2017թ. հաշվետվության⁴ Երևան քաղաքում վճարված 2032,0 դրամ գումարն արտացոլված չէ Ընկերության հաշվետվության մեջ: 2018թ. հաշվետվությունների մեջ տարբերություններ չկան:
- Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ)՝ 2016թ. ԱՃԹՆ շրջանակներում ներկայացրած հաշվետվության⁵ մեջ նշված է, որ այդ տարի Ընկերությունը վճարել է 5045040 դրամ եկամտահարկ, ըստ Ընկերության՝ հաշվարկվել և վճարվել է 5617878 դրամ: Ըստ ՊԵԿ-ի հաշվետվության՝ չի վճարել 50000,0 դրամ պետական տուրքը, ըստ Ընկերության՝ վճարել է: Համաձայն ՊԵԿ-ի 2017թվականի ԱՃԹՆ հաշվետվության⁶՝ այդ տարի Ընկերությունը վճարել է 5195034,0 դրամ եկամտահարկ և չի վճարել 50000,0 դրամ պետական տուրքը, իսկ ըստ Ընկերության հաշվետվության վճարել է 5617878 եկամտահարկ և 50000,0 դրամ պետական տուրք: Համաձայն ՊԵԿ-ի 2018 թվականի ԱՃԹՆ հաշվետվության⁷՝ այդ տարի Ընկերությունը վճարել է 3554991,0 դրամ եկամտահարկ, 194081,0 դրամ ավելացված արժեքի հարկ և չի վճարել ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ

³<https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=2>

⁴<https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=2>

⁵<https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2016&state-body=3>

⁶<https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

⁷<https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>

մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 50000,0 դրամ պետական տուրքը, իսկ ըստ Ընկերության հաշվետվության վճարել է 4006476,0 դրամ եկամտահարկ, 420000,0 դրամ ավելացված արժեքի հարկ և վճարել է ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 50000,0 դրամ պետական տուրքը:

- Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) և Ընկերության 2016-2017թթ. հաշվետվությունների՝ «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» և «Մշտադիտարկումների իրականացման վճար» բաղադրիչներով տարբերություններ չկան: Իսկ 2018թ. Շրջակա միջավայրի նախարարության հաշվետվությունում⁸ հաշվետու տարվա «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրում» տողում նշված է, որ դրամագլուխը համալրվել է 7084000,0 դրամով, իսկ Ընկերության հաշվետվությունում՝ 1028460,0 դրամով:

5. «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ- կողմից Հրազդան համայնքի բյուջեին կատարած վճարումները 2016, 2017, 2018 թվականներին

- 2016թ., 2017թ. և 2018թ. Հրազդան համայնքին գույքահարկ չի վճարել:
- 2016թ., 2017թ. և 2018թ. Հրազդան համայնքին չի վճարել հողի հարկ:
- Հողամասերի, փոխադրամիջոցների վարձավճարներ ոչ մի տարի չի կատարել:
- Հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններ ընդերքօգտագործման պայմանագրում չի նախատեսվել:
- Ընդերքօգտագործողի կողմից 2016թ., 2017թ. և 2018թ. համայնքին կատարած բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ չի կատարել:

6. Ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին, մշտադիտարկումների համար վճարումները, պարտադիր տուրքերի, բնապահպանական և բնօգտագործման վճարների վճարման նկարագիրը 2016- 2018 թթ. համար

- Ըստ Ընկերության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին (բազային՝ 27829000) համալրում ամեն տարի կատարել է 1028460,0 դրամով, սակայն, ըստ ՇՄՆ նախարարության հաշվետվության, համալրումներ կատարել է միայն 2018 թվականին:
- Մշտադիտարկումների իրականացման վճար սահմանված չէ, հատկացումներ այդ տարիների համար չի կատարվել:
- Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար 50000,0

⁸ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=1>

դրամ պետական տուրքը վճարել է ամեն տարի՝ ըստ իր հաշվետվության, սակայն, Հստ ՊԵԿ-ի, այդ տուրքը չի վճարել:

- Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

7.1. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2016-2019թթ. Հրազդան համայնքը որևէ սուբվենցիայի գումար չի ստացել, քանի որ «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ մինչև 2020թ-ն ընդգրկված չի եղել օրենքի 1-ին հոդվածում նշված կազմակերպությունների ցանկում:

8. Հրազդան համայնքի զարգացման ծրագրերում Ընկերության ներգրավվածության մասին

1. Հրազդան քաղաքի 2019-2023թթ. զարգացման ծրագրում⁹ «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ –ի գործունը ներառված չէ, այն նույնիսկ նշված չէ քաղաքի տարածքում գործող ընկերությունների ցանկում:
2. Համայնքի զարգացման ծրագրում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներից նշվում է 2-ի՝ ջերմոցային գազերի արտանետումների կանխարգելման և միջմարզային կոշտ թափոնների աղբավայրի կառուցման մասին:

9. Այցելությունների արդյունքում անցկացրած հարցումների վերլուծություն

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն ազդակիր Հրազդան համայնքի ղեկավարի տեղակալի և բնակչության շրջանում 2020 թվականին անցկացրեց հարցում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի շուրջ՝ նպատակ ունենալով պարզել բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

⁹ <http://kotayk.mtad.am/files/docs/38022.pdf>



Նկար 2. ԷկոԼուրի աշխատանքային խմբի հանդիպումը Հրազդանի փոխհամայնքապետի հետ

Հարցմանը մասնակցել է 13 անձ՝ 6 կին և 7 տղամարդ, այդ թվում, նաև Հրազդանի Հրազդան համայնքի ղեկավարի տեղակալն ու Ծաղկաձորի գրողների միության հյուրանոց համալիրի տնօրենը: Հարցման մասնակիցները կամ իրենց ընտանիքի անդամները երբևէ չեն աշխատել «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ –ում: Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված է սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
- «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ–ի գործունեության մասին որևէ ստույգ՝ փաստաթղթային տեղեկատվություն քաղաքապետարանը չունեւ, ծանոթ չէր ընդերքօգտագործման թույլտվությանը և պայմանագրային պարտավորություններին:
- Ընկերության և ազդակիր համայնքի միջև համագործակցությունը բացակայում է:
- Մինչ հարցման օրը համայնքի հետ Ընկերությունը չէր կնքել հողերի և այլ անշարժ գույքի դիմաց վարձակալության պայմանագրեր:
- «Կո՞ղմ եք հանքի շահագործմանը, թե՞ ոչ» հարցի պատասխանը միանշանակ է, հարցվածներից ոչ ոք կողմ չէ հանքավայրի շահագործմանն, անգամ եթե շահագործման պարագայում Ընկերությունը ստանձնի շոշափելի սոցիալական աջակցության պատասխանատվություն համայնքի նկատմամբ:
- Հրազդանի երկաթի հանքավայրի շահագործման դեպքում շրջակա միջավայրի աղտոտման հնարավոր ռիսկերի շարքում հարցվածները նշել են ծառերի և մշակովի բույսերի չորացումը, հողերի բերրիության անկումը, տեղական գյուղատնտեսական մթերքի իրացման ժամանակ հնարավոր խորընդոտները, հողերի և խմելու ջրի աղտոտման արդյունքում առողջական խնդիրների առաջացման վտանգները, արոտավայրերի կրճատման և աղտոտվածության պատճառով անասունների գլխաքանակի անկումը:

- Շրջակա միջավայրի աղտոտվածության մասին համայնքի բնակչության իրազեկվածության և նրանց անհանգստությունների մասին հարցման պատասխաններից պարզ դարձավ, որ նրանց տեղեկացվածության աստիճանը բավականին բարձր է, քանի որ նրանք տեղական ժամանակ կրում են քաղաքի ցեմենտի գործարանի՝ մթնոլորտային օդի և Մարմարիկ ու Հրազդան գետերի ջրերի որակի վրա թողած բացասական ազդեցությունը: Հարցվածների գերակշիռ մասը հստակ գիտի աղտոտվածության մակարդակի մասին և այն լուրջ անհանգստացնում է իրենց:
- Հարցման մասնակիցների 80%-ի կարծիքով «Ֆորչն Ռիզորսիս» ՍՊԸ –ի կողմից շրջակա միջավայրի աղտոտվածության և խախտված հողերի հետևանքների պատասխանատվությունը պետք է կրի Ընկերությունը, իսկ 20%-ի կարծիքով՝ Ընկերությունը և պետությունը:
- Համայնքի բնակիչները որպես համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրներ նշել են ցածր աշխատավարձը, ոռոգման ջրի պակասը, աշխատատեղերի բացակայությունը:
- Որպես համայնքի զարգացման տեսլական՝ հարցվածները դիտարկում են տուրիզմի և գյուղատնտեսության զարգացումը, համայնքի երիտասարդական նախաձեռնությունների աջակցումը, սոցիալական ձեռներեցությունների աջակցումը, անթափոն և մաքուր տեխնոլոգիաներով նոր աշխատատեղերով արտադրությունների հիմնումը:
- Շրջակա միջավայրի աղտոտումը և արդեն իսկ առկա աղտոտվածությունը նվազեցնելու համար առաջարկվել է նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը և համայնքում էկոնախաձեռնությունների կիրառումը:
- Համայնքում առողջապահության մակարդակի բարելավման համար, ըստ հարցվածների, անհրաժեշտ է Հրազդանի Բ/կ-ն համալրել բարձր որակավորում ունեցող մասնագետներով և ժամանակակից սարքավորումներով:
- Բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար հարցվածներն առաջարկում են, որպեսզի ընդհանուր գանձապետական հաշվի փոխարեն բնապահպանական հարկերը մուտքագրվեն համայնքային բյուջե¹⁰:

10. Եզրակացություն

1. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն՝ արդյունահանման աշխատանքները մինչև 2020 թվականի ավարտը չի սկսել՝ չապահովելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, խախտելով Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի պահանջները:

2. Ընկերությունը բնապահպանական և բնօգտագործման հարկեր չի հաշվարկել և չի մուծել, հողի հարկ չի մուծել՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:

¹⁰ Այս առաջարկը հակասում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի և ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 27-ի N212-Ս որոշմանը:

Այսինքն, իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա:

3. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:

4. 20.11.2012թ. ՊՎ 169 ընդերքօգտագործման պայմանագիրը կնքվել է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների խախտմամբ, այն չունի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ դրույթներ:

5. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:

6. Ընկերությունը չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:

7. Այս Ընկերության, ինչպես նաև մի քանի այլ ընկերությունների համար օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար վճար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից չի սահմանվել, ինչը հանդիսանում է ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» N 22-Ն որոշման պահանջների խախտում:

8. Ընկերությունն իր գործունեության ընթացքում չի ապահովել աշխատանքների և իրագործվող ծրագրի թափանցիկությունն ազդակիր համայնքի և շահագրգիռ հասարակայնության նկատմամբ:

9. Ընկերությունը չաշխատելու հետևանքով չի ապահովել առնվազն 5 հարյուր նոթ, իսկ ծրագրված ամբողջ հզորությամբ աշխատելու դեպքում՝ մինչև 3 հազար մարդու աշխատատեղեր ստեղծելու իր ծրագրային խոստումը¹¹:

¹¹ <https://www.tert.am/am/news/2011/11/14/fortuneresources/387418>

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները